

Աշոտ Ն. Հայրունի
Պատմ. գիտ. դոկտոր

ՊԱՌԻԼ ՌՈՀՐԲԱԽԵ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ

Նոր քննական լույսի ներքո*

Գերմանացի մեծանուն հրապարակախոս, գիտնական, հասարակական-քաղաքական գործիչ, ճանապարհորդ և լրագրող դր. Պաուլ Ռոհրբախի կյանքը, գործունեությունն ու գրական ժառանգությունը բազմաթիվ մենագրությունների և հոդվածների նյութ է դարձել: Մինչ օրս իր ժողովրդականությունը չկորցրած այս ինքնատիպ մտածողի և վառ անհատականության մասին Գերմանիայում ներկայումս նույնպես ուսումնասիրություններ են լույս տեսնում:

Սակայն Հայաստանի հետ Ռոհրբախի ավելի քան կեսդարյա փոխառնչությունները, նրա հայանպաստ հրապարակախոսական ու կազմակերպական գործունեությունը, որպես կանոն, անտեսվել է գերմանական պատմագիտության կողմից: Ավելին, այդ հիմնահարցն առայսօր թերի են լուսաբանել նաև հայ պատմաբանները, ինչը հիմք է դարձել Ռոհրբախի մասին մեր իրականության մեջ ոչ հավաստի սկզբնաղբյուրների վրա հիմնվող իրարամերժ, իսկ երբեմն էլ բացասական կարծիքների ու գնահատականների տարածման համար:

Ի վերջո ո՞վ է եղել Պաուլ Ռոհրբախը մեզ՝ հայերիս համար: Հայաստանի հետ գերմանացի երիտասարդ հրապարակախոսի¹ առաջին շփումները թվագրվում են 1894-ով, երբ նա, իրազեկ դառնալով Սասունի կոտորածներին և Օսմանյան կայսրությունում հայության համար ստեղծված ծանր իրադրությանը, հետազոտական ճանապարհորդություն ձեռնարկեց դեպի Հայաստան: Էջմիածնում հանդիպելով Գերմանիայում իր ուսումնառությունն արդեն ավարտած հայ աստվածաբան

Գ. (Թ) Գաթի, քիվ 4 (36) հոկտեմբեր-դեկտեմբեր, 2011

վեյ համահայկական հանդես

* Ընթերցողներին հիշեցնում ենք, որ մեր հանդեսի այս բաժնում տպագրվող հոդվածները նպատակ ունեն բացահայտել գիտության համար վիճելի հիմնահարցերը, ուստի նրանցում ամկա գնահատականները կարող են չհամապատասխանել խմբագրության տեսակետներին: Հոդվածն ընդունվել է տպագրության 30.11.2011:

¹ Պաուլ Ռոհրբախը ծնվել է 1869 թ. հունիսի 29-ին Իրգենում (Լատվիա): 1887-1888 թթ. նա Դորպատի համալսարանում ուսանել է պատմություն և աշխարհագրություն, այնուհետև ուսունը շարունակել է աստվածաբանության բնագավառում և 1888 թ. Ստրասբուրգում ստացել է աստվածաբանի ակադեմիական կոչում: 1888 թ. նա Ավետարանական-սոցիալական կոնգրեսի գլխավոր քարտուղարն էր, 1891 թ. ստանձնեց նաև «Die Zeit» քաղաքական շաբաթաթերթի գլխավոր խմբագրի պարտականությունները և նույն տարում Բեռլինում պաշտպանելով իր դոկտորական ատենախոսությունը՝ ստացավ փիլիսոփայության դոկտորի գիտական աստիճան: St u Deutsche Biographische Enzyklopädie, herausgegeben von Walther Killy und Rudolf Vierhaus, Bd. 8, München, 1999, S. 371.

Կարապետ Տեր-Սկրտչյանին² և խրախուսվելով նրա կողմից՝ Ռոհրբախը մտահոգացավ ստեղծել մի կազմակերպություն, որը կարող էր աջակցել հայ եկեղեցու բարենորոգմանը և այդ նպատակով երիտասարդ հայ աստվածաբաններին Գերմանիայում ուսանելու հնարավորություն ընձեռել: Ըստ այդմ, Գերմանիա վերադառնալուց հետո նա «Die Christliche Welt» պարբերականի բարեկամների հետ 1897 թ. հոկտեմբերի 12-ին Այզենախում կայացած հանդիպման ժամանակ առաջարկեց հայ ուսանողների հրավիրել Գերմանիա և կրթաթոշակներ հատկացնել նրանց: Առաջարկը հավանության արժանացավ ունկնդիրների կողմից, և այն իրագործելու համար Ռոհրբախը պարբերականի խմբագիր Մարտին Ռադեի և մի շարք գործընկերների հետ համագործակցությամբ հիմնադրեց «Das Notwendige Liebeswerk» («Անհրաժեշտ օժանդակություն») կազմակերպությունը:³ Վերջինիս պատասխանատուները դարձան գերմանական կողմից Ռոհրբախը, իսկ հայկական կողմից՝ Տեր-Սկրտչյանը, որը 1894-ից դասավանդում էր Էջմիածնի Գևորգյան ճեմարանում և Գերմանիա ուղարկվող ուսանողներին ինքն էր ընտրում իր աշակերտներից:

Թե ինչպիսին էր Ռոհրբախի և իր իսկ կողմից հիմնված ընկերության դիրքորոշումը Հայ առաքելական եկեղեցու բարենորոգության խնդրի վերաբերյալ, կարող են վկայել 1898-ին «Die Christliche Welt» պարբերականում Ռոհրբախի կողմից հրատարակված «Ինչի՞ կարիք ունի հայոց եկեղեցին» խորագրով երեք ծավալուն հոդվածները: Անիմաստ համարելով հանգամանալից անդրադարձն այդ հրապարակումներին՝ կարելի է միայն նշել, որ նրա հեղինակի մտտեցումներն այն աստիճան համահունչ էին հարցի առնչությամբ «Արարատ» պարբերականում Կարապետ Տեր-Սկրտչյանի և այլ առաջադեմ հոգևորականների կողմից արտահայտված կարծիքներին, որ ժամանակակիցներից ոմանք Ռոհրբախի մտքերը պարզապես համարել են «հայկական տեսակետների վերարտադրությունը»⁴:

Միանշանակորեն մերժելով ամերիկյան բողոքական քարոզիչների գործելակերպը, որոնք հայ եկեղեցու «բարենորոգման» պատրվակով պառակտում էին ինչպես եկեղեցին, այնպես էլ համայնքները, Ռոհրբախը դավանում էր այն սկզբունքը, որ հայ ժողովուրդն ու եկեղեցին ունեն ողջ անհրաժեշտ ներուժը՝ ներսից ձեռնամուխ լինելու բարենորոգման գործին և այդ կերպ դառնալու առավելագույնս ազդեցիկ ու կենսունակ: Այն, ինչի կարիքն ունեին հայ հոգևորականները, Ռոհրբախի համոզմամբ, գիտական-աստվածաբանական կրթությունն էր, որը և նրանց պետք է տրամադրվեր «Անհրաժեշտ օժանդակություն» ընկերության միջոցով:

Չնայած հանգամանքների բերումով այս ընկերությունը կարողացավ ապահովել միայն հինգ հայ ուսանողների կրթությունը (Հակոբ Թոփչյան, Արտաշես Աբեղյան, Միսաք Կոստիկյան, Գալուստ Տեր-Գրիգորյան (Իսկանդարյան) և Տիգրան Մաքսուդյան), այնուամենայնիվ ինչպես նրանց, այնպես էլ մոտավորապես նույն շրջանում Գերմանիայում ուսանած հայ հոգևորականների՝ Կարապետ

2 Ռոհրբախը և Տեր-Սկրտչյանը ծանոթացել էին դեռ 1892 թ. Բեռլինում, պրոֆ. դր. Ադոլֆ ֆոն Գառնակի դասախոսությունների ժամանակ: Տե՛ս **Hacik Rafi Gazer**, Die Reformbestrebungen in der Armenisch-Apostolischen Kirche im ausgehenden 19. und im ersten Drittel des 20. Jahrhunderts, Göttingen, 1996, S. 30.

3 Անդ, էջ 29:

4 **Ղազարյան Խ.**, Բարենորոգչական նախաձեռնությունները Հայ առաքելական եկեղեցում 19-րդ դարի վերջին քառորդին և 20-րդ դարի առաջին կեսին, Էջմիածին, 1999, էջ 45:

Տեր-Սկրտչյանի, Գարեգին Հովսեփյանի, Երվանդ Տեր-Սինասյանի, Գրիգորիս Պալաքյանի և այլոց անունները թերևս բավական են՝ ըմբռնելու համար, թե որպիսի առողջ հիմքերի վրա էր դրված և որքան արգասաբեր էր գերմանական բողոքական շրջանակների հետ Հայ առաքելական եկեղեցու համագործակցությունը:

Ռոհրբախը 1897-1902 թվականների և 1909-ի ընթացքում ձեռնարկեց ընդհանուր թվով հինգ հետազոտական ճանապարհորդություն Հայաստանի երկու հատվածներում, որոնց ժամանակ նա կարողացավ, ինչպես հարկն է, իրագրելվել այնտեղ տիրող իրադրությանը ու ամբողջացնել իր պատկերացումներն ինչպես հայ ժողովրդի ազգային առանձնահատկությունների ու նկարագրի, այնպես էլ նրա հարևանների, գործրինակ՝ քրդերի, վրացիների, թուրքերի և այլոց վերաբերյալ: Այդ ճանապարհորդություններին, անշուշտ, հաջորդում էր բազմաթիվ աշխատությունների, տեղեկագրերի և հոդվածների լույսընծայումը, որոնք, մերկացնելով հայ ժողովրդի վերաբերյալ Գերմանիայում առկա թյուրըմբռումները, գերմանացի ընթերցողին հնարավորություն էին ընձեռում ստուգապես հաղորդակից դառնալու Հայոց պատմությանը, պատմամշակութային արժեքներին և Հայաստանում տիրող իրադրությանը:

Հատկանշական է, որ հայ ժողովրդին համարելով «Արևելքի ամենաօժտված ժողովուրդը», Ռոհրբախն ինչպես Կովկասի, այնպես էլ ողջ Արևելքի զարգացման հարցում կարևորագույն և վճռորոշ դերը վերապահում էր հայությանը: «Վրացին անպայմանորեն անընդունակ չէ, սակայն ծույլ է,- նշում էր նա 1903 թ. լույս տեսած իր «Կովկասից Միջերկրական ծով. հարսանեկան և հետազոտական ճանապարհորդություն Հայաստանով» աշխատությունում: Նրա ազգային իդեալը վաստակող քաղաքացին չէ, այլ ասպետական ռազմիկը: Ողջ միջնադարի ընթացքում և նույնիսկ ընդհուպ մինչև այն ժամանակ, երբ Վրաստանը դարձավ ռուսական, երկրի ներքին սահմանադրությունը ավատական էր, իսկ վաճառականական խավը՝ արհամարհված: Դա մինչև այսօր էլ այն հետևանքն ունի, որ ազգն իբրև այդպիսին նվազ ըմբռնում ունի վաճառականական բանիմացության, եռանդուն և ժրջան աշխատանքով վաստակ ունենալու մասին: Յուրաքանչյուր վրացի իրեն ի ծնե նշանավոր է համարում: Նա միշտ պատրաստ է այն ամենն, ինչ ունի, վատնել երաժշտությամբ և պարով ուղեկցվող մի գինաբրբուքի, որսորդության, շքեղ պիջակի, ձիավարելու, կրակելու և սրամարտելու համար...»⁵:

Մինչդեռ հայերի պարագայում, Ռոհրբախի համոզմամբ, խնդիրը միանգամայն այլ է. «Հայը բանիմացությամբ և ժամանակակից կյանքի նյութական պահանջներին հարմարվելու ունակությամբ վրացուց մեծապես առաջ է գտնվում,- նշում էր նա,- և ըստ այդմ Կովկասի հայ ազգաբնակչությունն այդ երկրի ընդհանուր նյութական զարգացման համար խիստ նշանակալից գործոն է հանդիսանում: Կարելի է ուղղակիորեն պնդել, որ Կովկասի տնտեսական յուրացումը, որն, անշուշտ, վերջին տասնամյակներին նշանակալից առաջընթաց է ունեցել, սակայն դեռ շատ հեռու է իր գագաթնակետին հասնելուց, առանց հայ բնակչության, որ կազմում է գրեթե մեկ միլիոն մարդ, չէր կարողանա իր այսօրվա հաջողություններն ունենալ: Չնայած վրացիները նույնպես, այսպես ասած, հին մշակութային ռասա են իրենցից ներկայացնում, այնուամենայնիվ իրենց ազգային նկարագրի

5 Rohrbach P., Vom Kaukasus zum Mittelmeer. Eine Hochzeits- und Studienreise durch Armenien, Leipzig, 1903, S. 10.

պատմական զարգացման հետևանքով անընդունակ են դարձել սեփական ուժերով ծաղկող, արդյունաբեր երկրի վիթխարի հարստություններն օգտագործող տնտեսական կյանք կառուցել: Այդ անելու համար նրանց պակասում են անհրաժեշտ կրթությունն ու փորձառությունը, այդ անելու համար նրանց զգացողությունն ու ըմբռնումը չափազանց շատ են շեղվել դեպի կյանքի բոլորովին այլ՝ ոչ տնտեսական իդեալ»⁶:

Ինչ վերաբերում է Կովկասի մյուս ժողովուրդներին, ապա նրանք, նշում էր Ռոհրբախը, «մասամբ մահմեդականներ են և որպես այդպիսին՝ արդեն իսկ անպիտան ցանկացած ժամանակակից զարգացման համար և մասամբ էլ բարբարոսներ, որոնք դեռ առհասարակ որևէ առնչություն չեն ունեցել բարձր մշակութային կյանքի հետ»⁷:

Այդ իրավիճակում հայերը, Ռոհրբախի համոզմամբ, 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո «իրենց գործարար խելքով, նախաձեռնողականությամբ և համեմատաբար նշանակալից դրամական միջոցներով» անգնահատելի ծառայություն են մատուցել Կովկասի զարգացմանը: Շարունակելով զարգացնել իր միտքը՝ Ռոհրբախը նշում էր. «Ինքնին հասկանալի է, որ ինքնուրույն վաստակով ապրելու լավ և ուժեղ օժտվածություն ունեցող ազգը գերծ չի եղել նաև հայտնի թերություններից: Սակայն, երբ մասնավորապես Թիֆլիսի վրացիներն այսօր դառնագին գանգատներով և զայրալից արտահայտություններով բողոքում են, թե իրենք՝ երկրի իսկական բնիկները և հին անցյալ ունեցող որդիներն ու տերերն այժմ հարկադրված են տեղ բացել հայ ներգաղթողների անխիղճ գործարարության առջև, չնայած կարեկցանք է շարժում, բայց երկրի իրական շահերի տեսանկյունից ոչնչով արդարացված չէ: Երբ այդ իրավիճակին հասու ես դառնում, ձեռք ես բերում նաև պարզ պատկերացում առհասարակ՝ հայ ժողովրդի ապագայի վերաբերյալ, գոնե այնքանով, որքանով խոսքը վերաբերում է ռուսահայերին: Նրանք, արդարև, ներկայումս ողջ ազգի նույնիսկ կեսը չեն կազմում, սակայն նրանց թիվն աճում է մեծ արագությամբ, մինչդեռ Թուրքիայում նրանք ոչ միայն դատապարտված են դանդաղ առաջընթացի և անգամ՝ անշարժության, այլև, ինչպես ցույց են տալիս նորագույն իրադարձությունները, ենթարկվում են սարսափելի կոտորածների: Քաղաքական դատողություն կատարողի համար, որը ոչ միայն ներկան պետք է հաշվի առնի, այլև եկող տասնամյակներն ու սերունդները, ըստ էության, կասկածի ենթակա չէ, որ վաղ թե ուշ Հայկական բարձրավանդակի՝ այժմ դեռևս թուրքական մասը և պարսկական գավառներից լավագույնը՝ Ադրբեջանը, նույնպես ռուսական տարածք են դառնալու: Այնտեղ հայերին իրերի բերումով նույն դերն է վիճակվելու, որը նրանք այժմ արդեն Կովկասում են խաղում: Տնտեսական մշակույթի զարգացումը, հենց որ քաղաքական և ֆիզիկական ապահովությունն ի հայտ գա, նրանց հայրենիքում և նույնիսկ հարակից սահմանային տարածքներից այն կողմ գտնվող վայրերում ամենուր ընկնելու է նրանց ուսերին: Այդ հարցում ոչ մի բռնի ուժ որևէ բան փոխել չի կարող: Նրանք բնակվում են իրենց երկրում և ուրեմն՝ տարածապես ամենամոտիկն են այդ անելու համար: Նրանք ունեն անհրաժեշտ մտավոր ունակություններն ու նկարագիրը և դրանցով գերազանցում են բոլոր մյուս ազգություններին, որոնք կկանենան այդ ոլորտում իրենց հետ մրցակցության մեջ մտնել: Նրանց ռասան ինքնին անհամե-

6 Անդ, էջ 12:

7 Անդ:

մատ ավելի ուժեղ է և մրցութային մեջ կհաղթի, հենց որ վայրագ բռնի ուժի, կողոպուտի և ստրկացման արտոնությունը, որ Թուրքիայում մահմեդականներն ունեն հայերի, ինչպես և թուրքական տիրապետության տակ գտնվող բոլոր մյուս քրիստոնյաների հանդեպ, վերանա»⁸:

Ոչ պակաս ուշագրավ են նաև Ռոհիրբախի նկատառումները հայերի՝ եվրոպական արժեքները յուրացնելու հարցում ունեցած օժտվածության վերաբերյալ: «Ես, մասնավորապես, հայ ժողովրդի ուսյալ ներկայացուցիչների հետ իմ շփումների ընթացքում մշտապես կրկին ու կրկին փաստել եմ,- նշում էր նա,- թե հայը միջին հաշվով ինչ զարմանալի հեշտությամբ է տիրապետում մեր եվրոպական մշակույթի ամենաառաջնակարգ հնարավորություններին: Առաջին հերթին ֆենոմենալ է նրա՝ լեզուների յուրացման տաղանդը...: Մյուս նկատառումը, որ ես հաճախ հայտնել եմ, այն է, որ Կովկասի ժողովուրդներից ոչ ոք եվրոպական տնտեսավարման նկատմամբ այնչափ ըմբռնողության ձիրք չունի, որչափ հայերը, և այն էլ ամենատարբեր բնագավառներում՝ հեռախոսի օգտագործումից մինչև բաժնետիրական ընկերության կամ լրագրային գործի կազմակերպումը: Գրեթե յուրաքանչյուր հայ ի վիճակի է որևէ պատեհ պահի գործնականում ձեռնամուխ լինել ցանկացած գործի: Բացի այդ, նա ունի հռետորական, կարելի է ասել նաև՝ գրական-լրագրողական ջիղ: Տպագրված հայատառ գրականության, թերթերի և ամսագրերի զանգվածը հայ ժողովրդի և մասնավորապես նրա ուսյալ անդամների թվաքանակի համեմատ չափազանց մեծ է: Այդ ամենն անհրաժեշտ է իմանալ Առաջավոր Ասիայի՝ հայերի բնակության վայրերն ընդգրկող հատվածի ներկա, առավել ևս ապագա զարգացման հարցում այդ ժողովրդի նշանակության վերաբերյալ ճշմարիտ պատկերացում կազմելու համար: Այս նկատառումներն իմ մեջ արմատավորվել են ոչ թե մի եզակի թռուցիկ այցելության, այլ բազմաթիվ երկարատև այցերի և դիտարկումների ընթացքում, որոնց արդյունքները հաստատել են նաև իմ հաճախակի շփումները իրենց հայրենիքից դուրս գտնվող հայերի հետ: Ես գիտեմ Արևելքի գրեթե բոլոր հին մշակութային ժողովուրդներին, որոնք առանց բացառության նախկին ժամանակներում ավելի լավ օրեր են տեսել, և իմ ամբողջ տեսածից ու ապրածից հետո ունեմ այն համոզումը, որ նրանցից ոչ մեկին վիճակված չէ Արևելքի գալիք զարգացման հարցում ավելի նշանակալից դեր խաղալու, քան հայերին: Դա կարելի է պարզորոշ գիտակցել, երբ նրանց այնպիսի պայմաններում ես ծանոթանում, ինչպես այժմ ռուսական տիրապետության օրոք է, երբ յուրաքանչյուր ռուսայի համար առկա է մի որոշակի ասպարեզ իր բնածին և ձեռք բերած ունակությունները գործարկելու համար: Այստեղ՝ Կովկասում, նույնպես կարելի է երևութապես միանգամայն այլաբնույթ կռահումներ կատարել, երբ այցելում ես տարածքներ, որտեղ ուժեղ և հաստատաբանակ հայ գյուղական բնակչություն է ապրում: Այն տպավորությունն ես ստանում, թե գտնվում ես մի պարզունակ մշակութային կյանքի ոլորտում, և թվում է, թե քիչ հավանական է, որ այդ մարդկանց մեջ տեսանելի ժամանակներում ժամանակակից եվրոպական զարգացում սկսվի: Անհրաժեշտ է, սակայն, գեթ մեկ անգամ փորձել Շիրակից կամ Արարատից մի այդպիսի գյուղաբնակ պատանու ուղարկել որևէ արհեստագիտական կամ առևտրական դպրոց, և վեց տարի անց տեսնելով, թե նա ինչ է դարձել, հրաշք կհամարես: Այդ նույն փորձարկումը մի թաթարի կամ վրացու դեպքում մեծ

8 Անդ, էջ 12-13:

մասամբ կճախողվի»⁹:

Հայ ժողովրդի և նրա պատմական առաքելության մասին Ռոհրբախի տեսակետների վերոնշյալ՝ փոքր-ինչ հանգամանալից ներկայացումը թերևս անհրաժեշտ էր՝ պարզորոշ դարձնելու համար, թե կարճ ժամանակ անց Գերմանիայի ամենահամբավավոր և ժողովրդական քաղաքական մեկնաբաններից մեկը դարձած այդ հրապարակախոսի գաղափարական հայեցակարգը որպիսի աղերսներ ուներ Հայաստանի հետ:

1903 թվականին Ռոհրբախը Գերմանիայում նշանավոր դարձավ իր **«Գերմանիան համաշխարհային ազգերի շարքում»** գրքով: Ի թիվս բազմաթիվ այլ աշխատությունների, նա գրել է նաև **«Գերմանական միտքն աշխարհում»** և **«Աշխարհի քաղաքական տեսություն»** գրքերը, որոնք զգալիորեն մեծացրին նրա ժողովրդականությունը: 1903-1906 թթ. Ռոհրբախը նշանակվեց Հարավային Աֆրիկայի գերմանական հատվածի բնակեցման գործի կայսերական կոմիսար, իսկ 1914 թ. դարձավ ԱԳՆ-ի կառույցում ստեղծված՝ նորահիմն արտասահմանյան ծառայության կենտրոնի մամլո քարտուղարը՝ զուգահեռաբար ստանձնելով **«Das größere Deutschland»** պարբերականի (հետագայում՝ **«Deutsche Politik»**) հրատարակչի պարտականությունները¹⁰: Այդ ամենով հանդերձ, Ռոհրբախը մշտապես շարունակում էր զարգացնել Արևելքի ու նաև հայ ժողովրդի հետ իր շփումներն ու փոխառնչությունները:

1900 թ. մայիսի 11-ին, երբ դր. Յոհաննես Լեփսիուսի կողմից 1895 թ. հիմնադրված և այնուհետև «Հայաստանի օգնության գերմանական միության» կառույցում գործող **«Deutsche Orient-Mission»** («Գերմանական առաքելություն Արևելքում») ընկերությունը վճռեց դարձյալ անկախանալ այդ կառույցից և միայնակ շարունակել իր գործունեությունը, Ռոհրբախը, որը նաև անձնական և ընտանեկան ջերմ կապեր ուներ Լեփսիուսի հետ¹¹, ընդգրկվեց ընկերության վարչության կազմում՝ դառնալով նրա ամենագործուն անդամներից մեկը:

Տարբեր պարբերականներում Ռոհրբախի տպագրած ուղեգրություններն ու մյուս հրապարակումները նշանակալից դեր խաղացին 1894-1896 թթ. Համիդյան կոտորածների ընդհանուր պատկերը, հետևանքներն ու բուն ենթատեքստը Գերմանիայում ընկալելի դարձնելու և ըստ այդմ՝ հայ ժողովրդին օգնության ձեռք մեկնած գերմանական կազմակերպություններին հասարակական լայն շրջանների աջակցությունն ապահովելու համար: Իսկ 1909-ին, երբ տեղի էին ունեցել Կիլիկիայի հայության կոտորածները, և գերմանական մամուլը դարձյալ փորձում էր թերահավատություն հանդես բերել Գերմանիա թափանցող տեղեկությունների հանդեպ՝ դրանք համարելով անգլիական «հորինվածքներ», Ռոհրբախն էր, որը դարձավ այդ ամենը ներկայացնողն ու դատապարտողը: **«Գերմանական առաքելություն Արևելքում»** ընկերության վարչության հանձնարարությամբ մեկնելով Թուրքիա՝ նա այնտեղ համակողմանիորեն իրազեկվեց կատարված եղերական իրադարձություններին և վերադարձից հետո հրատարակեց **«Ճշմարտությունը Ադանայի մասին»** վերնագրով մի ծավալուն հոդված: Այդ հրապարակմանը բնորոշ էին ոչ միայն զարհուրելի իրադարձությունների և դրանց հետևանք-

9 Անդ, էջ 14-15:

10 Տե՛ս Deutsche Biographische Enzyklopädie, herausgegeben von Walther Killy und Rudolf Vierhaus, Bd. 8, München, 1999, S. 371.

11 Լեփսիուսն, ի դեպ, մկրտել էր Ռոհրբախի որդուն: Տե՛ս Feigel U., Das evangelische Deutschland und Armenien, Göttingen 1989, S. 98.

ների հանգամանալից նկարագրությունը, այլև Թուրքիայի ներքին կացության, սպանդի դրդապատճառների և դրան հետևած զարգացումների վերաբերյալ ուշագրավ քննական վերլուծությունները¹²:

Հավաստելով հանիրավի կերպով «անգլիական ստեր» անվանված տեղեկությունների ճշմարտացիությունը և մատնանշելով, որ կոտորածներին զոհ են գնացել ոչ պակաս քան 25 000 հայեր, Ռոհրբախը սուր քննադատության էր ենթարկում բոլոր նրանց, որոնց կարծիքով՝ կատարվածի համար շարժառիթ էր ծառայել հայերի «հեղափոխական գործունեությունը»: Հողվածում ոչ պակաս ուշագրավ էր նաև հիմնական կոտորածից 10 օր անց Ադանա ժամանած երիտթուրքական կանոնավոր զորամասերի գործողությունների լուսաբանումը, որոնք, ըստ էության, ավարտին հասցրին Ադանայի հայերի բնաջնջումն ու նրանց ունեցվածքի կողոպուտը: «Այդ դեպքը՝ թուրքական կանոնավոր բանակի էլիտան համարվող՝ Եվրոպայում տեղակայված զորամասերի մասնակցությունը Ադանայի կոտորածին, բոլոր դեպքերում հանդիսանում է ամենասև բիծը, որ երիտթուրքական բանակը մինչ այժմ դրոշմել է իր վահանի վրա»¹³, - նշում էր Ռոհրբախը:

Ռոհրբախի հողվածը, որտեղ համալիր պարզաբանումներ էին կատարվում ինչպես Ադանայի ջարդերի, այնպես էլ զուգահեռաբար՝ Կիլիկիայի այլ շրջաններում ևս տեղի ունեցած ավերումների ու կոտորածների մասին, հնարավորություն ընձեռեց ոչ միայն ճշգրիտ իրազեկվել կատարվածի վերաբերյալ, այլև զգալիորեն ընդլայնել գերմանական հասարակության աջակցությունը հայ փախստականներին օգնություն ցուցաբերելու հարցին:

1914-ին, երբ Հայկական բարենորոգումների փաթեթը ստորագրվել էր նաև Թուրքիայի կողմից, և իրական պայմաններ կարող էին ստեղծվել հայ ժողովրդի ֆիզիկական գոյության ապահովման ու տնտեսական զարգացման համար, Ռոհրբախը, որն, ի դեպ, 1909-ից դարձել էր «Գերմանական առաքելություն Արևելքում» ընկերության երկրորդ նախագահը, Լեփսիուսի և հայ ժողովրդի մյուս գերմանացի բարեկամների հետ հրապարակախոսական լայն գործունեություն ծավալեց հայ-գերմանական երկկողմ կապերի խորացման ու ամրապնդման ուղղությամբ: Ռոհրբախը 1914 թ. հունիսին ստեղծված՝ «Գերմանա-հայկական ընկերության» հիմնադիր անդամներից մեկն էր: Եվ պատահական չէ, որ ընկերության «Մեսրոպ» երկլեզվյա պարբերականի առաջին համարը սկսվում էր նրա հեղինակած «**Հայերը որպես քաղաքական և մշակութային գործոն Արևելքում**» ծավալուն հողվածով: Այն, ըստ էության, կարող է բնութագրվել որպես Արևելքի և Հայաստանի վերաբերյալ Ռոհրբախի հայացքների մի յուրօրինակ խտացում: Նախ՝ անդրադառնալով Օսմանյան կայսրությունում հայության թվաքանակի վերաբերյալ թուրքական պաշտոնական տեղեկատվության կեղծիքներին և հերքելով դրանք, նա այնուհետև լուսաբանում էր հայության հյուծման և երկրի հայաթափման՝ թուրքական կառավարության նախորդ տասնամյակների քաղաքականությունը, մասնավորապես՝ Բեռլինի կոնգրեսից հետո հայերին ամենուր փոքրամասնություն դարձնելու նպատակով հայկական վիլայեթների վերաձևման, մշտական հալածանքների միջոցով արտագաղթի պարտադրելու և նրանց բնակատեղիներում թուրքեր ու քրդեր բնակեցնելու իրողությունները: Չնայած այդ ամենին, նշում

12 **Տե՛ս Rohrbach P.**, Die Wahrheit über Armenien, „Der Christliche Orient“, 1909, S. 145-159.
13 Անը, էջ 153:

ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

Գ. (Թ) Գաթի, քիվ 4 (36) հոկտեմբեր-դեկտեմբեր, 2011

ՎԵՄ համահայկական հանդես

էր Ռ-ոհրբախը, Թուրքիայում դեռևս ապրում են 2 միլիոն հայեր. մի, անշուշտ, ոչ փոքր թվաքանակ, և սակայն հայ ժողովուրդը Թուրքիայում անհամեմատ ավելի մեծ դեր և գործառույթներ ունի, քան կարող էր նույնիսկ այդ թվաքանակից ենթադրելի լինել: «Նրանք, անտարակույս, ինչպես մտավոր, այնպես էլ նյութական առումով բոլոր արևելյան ժողովուրդներից ամենաակտիվն են,- ընդգծում էր Ռ-ոհրբախը,- այո, կարելի է ասել, որ նրանք իրենց օժտվածությամբ այնտեղ մրցակից չունեն»¹⁴:

Ռ-ոհրբախի համոզմամբ՝ ինչպես օժտվածության, այնպես էլ սեփական ազգային արժեքների պահպանման նախանձախնդրության և օտար ազդեցությունների ու ճնշումների դեմ դիմադրողականության առումով հայերի հետ ոչ մի այլ արևելյան ժողովուրդ չի կարող համեմատվել: Ի փաստարկումն ասվածի՝ նա ուշադրություն էր հրավիրում այն հանգամանքի վրա, որ հունարեն լեզուն մի ժամանակ իշխել է ողջ Փոքր Ասիայում, մինչդեռ «ներկայումս հույն քրիստոնյաների մինչև իսկ վերջին աննշան մնացորդները, որոնք դեռ թերակղզու կենտրոնական շրջաններում կան, թուրքերեն են խոսում»: Ինչպես հունարենն է ողջ Անատոլիայից նահանջել՝ «պատասպարվելով միայն եվրոպական Հունաստանի սահմաններից անդին, այնպես էլ Սիրիայում և Եփրատի ավազանում նախկինում տարածված արամեերենն է ամբողջովին տեղի տվել արաբերենին»: Մինչդեռ հայերը, նշում էր Ռ-ոհրբախը, անհամեմատ ավելի ծանր պայմաններում պահպանել են ինչպես իրենց լեզուն, այնպես էլ կրոնը՝ թուրքացման և արաբացման դեմ ի հայտ բերելով «ազգային դիմադրության ամենազորեղ ուժը»¹⁵:

Ռ-ոհրբախը հայի ազգային նկարագրին բնորոշ օժտվածությունը և այս առումով հարևանների համեմատ անմրցելիությունը փաստում էր ինչպես տնտեսության, մշակույթի, երկրագործության, արհեստագործության, առևտրի, այնպես էլ վարչական կառավարման, գիտության, կրթության և բոլոր մյուս ոլորտներում: Ընդ որում՝ նա իր տեսակետները փաստարկում էր խիստ հետևողականորեն՝ թե՛ ծանրակշիռ պատմական իրողությունների, թե՛ վիճակագրական տվյալների և թե՛ այլ հեղինակավոր ուսումնասիրողների հետազոտությունների վկայակոչմամբ: Այդ ոլորտներից բացառություն չէր կազմում, անշուշտ, նաև ռազմականը, չնայած այն հայերից իրենց հայրենիքում հարյուրամյակներ շարունակ բռնի խլված է եղել: «Հնուց ի վեր հայերը լավ են կռվել և պատերազմելու ավելի լավ հատկանիշներ են ի հայտ բերել, քան Արևելքի մյուս ժողովուրդները,- նշում էր Ռ-ոհրբախը:- Հայ վարձկանները և սպաները մեզ հանդիպում են այն գնդերում, որոնցով Հուստինիանոսի զորավարները Իտալիայի Արևելագոթական կայսրությունը տապալեցին: Բյուզանդական կայսրերի զորքերում հայկական տարրը միշտ կարևոր դեր է խաղացել: Պատերազմավարման ճանապարհով Կոստանդնուպոլսում կայսերական գահին մի անգամ նույնիսկ մի հայ դիմաստիա է տիրացել: Արաբների դեմ պատերազմների միջոցով հայ իշխաններին հաջողվել է, չնայած խալիֆայության գերակշռող ուժերին, ժամանակավորապես անկախանալ: Թուրքերի տիրապետության ընթացքում դարեր շարունակ հայերի ռազմական կարողությունները նկատելի չէին դառնում, և սուլթան Աբդուլ Համիդի կողմից մեծագույն խստությամբ իրականացված՝ ժողովրդի զինաթափումից հետո բազմահազարները մինչև իսկ առանց դիմադրության,

14 Rohrbach P., Die Armenier als politischer und kultureller Faktor im Orient, „Mesrop“, 1914, S. 2-3.

15 Անդ:

ինչպես ոչխարներ, զոհ դարձան քուրդ և թուրք մարդասպաններին: Սակայն երիտթուրքերի կողմից քրիստոնյաների գորակոչումը հազիվ էր հայերին հնարավորություն տվել զբաղվել ռազմական գործով, երբ ակնհայտ դարձավ, թե նրանք որքան լավ են կռվում: Դա չի կարող զարմացնել, երբ ծանոթանում ես հայերին իրենց հայրենիքում, քանի որ այդ ժամանակ առաջին իսկ հայացքից տեսնում ես, թե մեծ մասամբ ամրակազմ և միջահասակ, կլոր գլխով և խոհեմ աչքերով այդ կերպարանքների մեջ ինչպիսի ուժ կա»¹⁶:

Արևելքում Գերմանիայի ազդեցության ամրապնդման գլխավոր ճանապարհը հոգևոր-մշակութային կամքումը համարող հրապարակախոսն իր հողվածում հանգում էր այն հետևությանը, որ Գերմանիան առաջին հերթին պետք է շահագրգռված լինի հայերի՝ «Արևելքի ամենամշակութային, օժտված և աշխատասեր» ժողովրդի հետ շփումներ ունենալու հարցում: «Մենք մեր հիմնավոր և անհրաժեշտ խնդիրն ենք համարում,- նշում էր նա,- որ Գերմանիայի ազդեցությունը Թուրքիայում ոչ միայն երկաթուղու կառուցմամբ կամ Ռազմական միսիայով, այլև հոգևոր փոխառնչությունների զարգացմամբ, գերմանական մշակութային աշխատանքի միջոցով, մի խոսքով՝ բարոյական նվաճումներով ընդլայնվի և ամրապնդվի, ընդ որում՝ մենք վճռել ենք Թուրքական կայսրության մեջ առաջանալ խաղաղ ճանապարհով և թուրքերի ու մյուս ազգերի հետ բարեկամական փոխըմբռնման պայմաններում: Այն, ինչ մենք ըստ այդմ մտադրվել ենք անել, գերմանական գիտության, կրթության և որակավորման օգնությամբ Թուրքիայի իրադրության ներքին ամրակայումն է: Այդ գործում հայերը մեզ համար անփոխարինելի են: Հայերի մոտ, ավելի, քան մեկ այլ արևելյան ժողովրդի, այժմ էլ դեռ առկա են իրենց կրթությունը գերմանական աջակցությամբ և գերմանական դպրոցներում ու համալսարաններում ձեռք բերելու պատրաստակամությունն ու հակումը: Հույժ անհրաժեշտ է այդ առկա բողբոջները խնամել և մեծացնել»¹⁷:

Պատերազմի բռնկումը և հետագա իրադարձությունները, սակայն, պետք է վկայեն, որ Արևելքի մշակութային կամ «բարոյական» նվաճման Ռոհրբախի կոնցեպցիան առնվազն ժամանակավրեպ էր, և արևմտահայության բնաջնջման՝ երիտթուրքերի քաղաքականությունը հայ ժողովրդի գերմանացի բարեկամներին, նաև՝ Ռոհրբախին նոր գերխնդիրների առջև պետք է կանգնեցներ:

Ի տարբերություն Ռոհրբախի այս ժամանակաշրջանի գործունեության, տողերիս հեղինակի կողմից արդեն բավականաչափ լուսաբանված է այն հարցը, թե պատերազմի տարիներին դր. Լեփսիուսը և նրա կազմակերպությունը ինչպիսի գործելակերպ որդեգրեցին¹⁸: Հայանպաստ դիրքորոշում ունեցող գործիչների համար Գերմանիայում ստեղծված ծանր իրավիճակում «Գերմանական առաքելություն Արևելքում» ընկերության հոգաբարձությունը տեղի տվեց պաշտոնական քարոզչության պահանջներին՝ համաձայնելով պատերազմի ժամանակամիջոցում Թուրքիայում կատարվող եղերական իրադարձությունների առնչությամբ լռություն պահպանել: Ընդ որում՝ մշտապես իր խղճին և բարոյականությանը հետևող հայանվեր գործչի՝ Լեփսիուսի և հոգաբարձության անհամաձայնության, իսկ փոքր-ինչ ավելի ուշ նաև՝ գժտության ու պառակտման շարժառիթը, ինչպես հայտնի է, դարձավ նրա «Տեղեկագիր Թուրքիայում հայ ժողովրդի դրության

16 Անդ, էջ 6:

17 Անդ, էջ 11:

18 Տե՛ս Դայրունի Ա., Յոհաննես Լեփսիուսի առաքելությունը, Եր., 2002, էջ 283-303:

վերաբերյալ» աշխատությունը, որը հոգաբարձությունը, հակառակ իր նախապես ստանձնած պարտավորությանը, հրաժարվեց տպագրել և տարածել:

Իսկ ինչ վերաբերում է ընկերության երկրորդ նախագահին՝ Ռոնրբախին, ապա նա, չունենալով պետական քարոզչության պահանջներին կուրորեն համակերպվելու մտադրություն, չունեի նաև դրանց հակադրվելու՝ Լեփսիուսի վճռականությունը: Սկզբունքորեն կողմ լինելով Լեփսիուսի աշխատության տպագրմանն ու առաքմանը, նա, այնուհանդերձ, չհետևեց Լեփսիուսին, երբ վերջինս բաժանվեց կազմակերպությունից: Սակայն Ռոնրբախը չհետևեց նաև «Գերմանական առաքելություն Արևելքում» ընկերության հոգաբարձությանը, որը Լեփսիուսի հեռանալուց հետո շարունակ փորձում էր վարկաբեկել ու կաթվածահար անել վերջինիս անհատական նախաձեռնությամբ շարունակվող՝ հայերին օգնելու աշխատանքները: Ուստի 1917 թ. աշնանը Ռոնրբախը նույնպես հեռացավ ընկերությունից¹⁹:

Այնուամենայնիվ, բարոյականության և քաղաքական շահերի բախման այդ դժվարին տարիներին ինչպիսի՞ն էր Ռոնրբախի իրական դիրքորոշումը: Լավագույն պատասխանը թերևս տալիս է 1916 թ. օգոստոսի 15-ին իր բարեկամներից մեկին առաքված նրա նամակը: Այն վկայում է, որ Ռոնրբախը, հույժ իրագեկ լինելով հայության հանդեպ գործադրված ոճրագործություններին, թեկուզև ոչ դյուրին կերպով, այնուհանդերձ, ինչպես շատերը, պարտավորություն էր ստանձնել դրանց վերաբերյալ պատերազմի ընթացքում լռություն պահպանել: Ստորև ամբողջությամբ ներկայացնում ենք այդ նամակի բովանդակությունը, որտեղ պարզորոշ արտացոլված է նաև պատերազմող Գերմանիայի հպատակ Ռոնրբախի ներքին պայքարը՝ Ռոնրբախ-մարդու հետ, և այն հոգեբանական երերումները, որոնք նա ապրել էր «լռելու» որոշումը կայացնելիս. «**Ես այսօր հայտարարել եմ, որ դուրս եմ գալիս Գերմանա-թուրքական ընկերությունից**²⁰: **Գու առաջիկա օրերին Նիպագեի գրքից մի քանի օրինակ կստանամ**²¹: **Բովանդակությունը սարսափելի է, այնպես որ ես այլ կերպ չեմ կարող, քան վերջին, մի ներքին գերմանա-թուրքական միասնության՝ մինչև այժմ դեռ տանջալիորեն և ծանր խղճով ամրակայված կամուրջը քանդել: Ես, իհարկե, պատերազմի ընթացքում հասարակության մեջ լռելու եմ և պետք է լռեմ, բայց ես Նիպագեի նամակը գաղտնի կտարածեմ և հենց որ Հայկական հարցը հասարակության մեջ դարձյալ հնարավոր լինի քննարկել, կտամ իրադարձությունների մի նկարագրություն՝ ճշմարտությանն այնպես հավատարիմ, որքան ես այն կարող եմ ապացուցել՝ հետևյալ պահանջով. քանի դեռ թուրքերն այդ առնչությամբ չեն ապաշխարում, Գերմանիայի անունն աշխարհում պետք է համարվի անարգված, և ո՛չ Արևելքում, ո՛չ էլ Արևմուտքում գերմանական «մաքուր խիղճ» չի կարող լինել: Ես համոզված եմ և պարզ տեսնում եմ աչքերիս առաջ, որ թուրքերի այժմյան հայկական քաղաքականությունը Թուրքիայի մահվան դատավճիռն է: Երբ այդ իրողությունները հրապարակայնորեն հայտնի դառնան, այլևս հնարավոր չի լինի մեզ կողք կողքի ցույց տալ թուրքերի հետ: Գա նշանակում է, որ թուրքերը մինչ այդ են հարկադրված պատժվելու և հատուցելու: Ես առնվազն իմ ամբողջ ուժով հանդես կգամ այդ բանի համար, և օրը պետք է գա,**

19 Lepsius J., In eigener Sache, „Mitteilungen aus der Arbeit...“, 1918, S. 93.

20 Ռոնրբախը մինչ այդ անդամակցում էր նաև «Գերմանա-թուրքական ընկերությանը»:

21 Խոսքը վերաբերում է դր. Մարտին Նիպագեի «Գերմանացի ավագ ուսուցչի տպավորությունները Թուրքիայից» գրքին:

երբ կընդունեն դրա անհնարինությունը, և այդ ժամանակ ինձ համար միակ հետևությունը կկատարեն ու կդադարեն քաղաքական իմաստով գերմանացի լինել: Մի հայրենիքի համար, որը նման սոսկալի ոճրագործությունը հանդուրժում է, ես նաև հետագայում չեմ դադարի գործել, բայց աշխարհի առջև այլևս չեմ կարողանա նրան պատկանել: Ես գիտեմ, որ դու իմ տեսակետին օբյեկտիվորեն հավանություն չես տա, սակայն դու այն սուբյեկտիվորեն կհասկանաս (ընդգծումը մերն է-Ա.Հ.)²²:

Պատերազմից հետո, երբ Գերմանիայում դարձյալ վերականգնվեց խոսքի ազատությունը, Ռոհրբախը շարունակեց գործել «Գերմանա-հայկական ընկերությունում», սկզբում՝ որպես վարչության անդամ, իսկ Լեփսիուսի մահից կարճ ժամանակ անց՝ 1927 թ. ապրիլի 27-ին դարձավ նրա նախագահը²³՝ մեծ ներդրում ունենալով կազմակերպության աշխատանքներում: Հատկանշական է, որ զինադադարին հաջորդող տարիներին, երբ Հայկական հարցը դարձյալ հայտնվել էր մեծ պետությունների քաղաքական օրակարգում, ի թիվս այլ հրապարակումների, Ռոհրբախը լույս ընծայեց նաև «Հայաստան» վերնագիրը կրող մի արժեքավոր աշխատություն, որը կարևոր տեղեկություններ էր հաղորդում հայ ժողովրդի, նրա բնօրրանի, պատմության և օրհասական դրության վերաբերյալ²⁴:

Ռոհրբախի երախտիքը խիստ մեծ էր նաև Գերմանիայում նացիոնալ-սոցիալիստական ռեժիմի տարիներին հայ ժողովրդին ուղղված մարտահրավերների դեմ պայքարում: Խոսքը վերաբերում է մասնավորապես 1933-ին գերմանական լրատվամիջոցներում լայն շրջանառության մեջ դրված՝ հայերի և հրեաների ռասայական նույնականության մասին տեսակետին, որը հղի էր անկանխատեսելի հետևանքներով, և որի դեմ պայքարը, բնականաբար, դարձավ ինչպես «Գերմանա-հայկական ընկերության», այնպես էլ հայ ժողովրդի մյուս գերմանացի բարեկամների գերխնդիրը: «Հայ ժողովրդի ներկայիս սփռվածությունն ամբողջ աշխարհում,- նշված էր «Գերմանա-հայկական ընկերության» հրապարակած հայտարարություններից մեկում,- պետք է պայմանավորել Թուրքիայի պետական տարածքից նրա բռնի վտարումով (1915-16 թթ.), որն այլ նպատակ չէր հետապնդում, քան մշակութապես ավելի բարձր աստիճանի վրա կանգնած քրիստոնյա ժողովրդի և թուրքերին օտար ռասայի ոչնչացումը: ...Քանի որ արևմուտքում հրեականության ըմբռնման հետ կապված է մոզակի կրոնի ընկալումը, անհրաժեշտ է նշել, որ հայերը, որպես հնդգերմաններ (այսինքն՝ հնդեվրոպացիներ-Ա.Հ.), ոչ միայն ռասայով են հրեաներին օտար, այլև, որպես աշխարհում հնագույն քրիստոնյա ժողովուրդը, կրոնական տեսանկյունից ևս նրանց հետ ոչ մի ընդհանրություն չունեն»²⁵:

Այլ գաղափարակից կազմակերպությունների, մասնավորապես Լեփսիուսի կողմից առաջին աշխարհամարտից հետո հիմնված «Գերմանական առաքելություն Արևելքում» ընկերության հետ սերտ համագործակցությամբ ամիսներ շարունակ ծավալվող այս գրապայքարը, որում ներգրավվեցին նաև զիտական, կրոնական և քաղաքական այնպիսի մեծ հեղինակություններ, ինչպիսիք էին պրոֆ. Կ. Ֆ. Լեհման-Հաուպտը, պրոֆ. Յ. Ռիխտերը, Սաքսոնիայի դուքս պրոֆ. Ֆոն Մաքսը, Յ. Ֆոն Լեբսը և այլք, հասավ իր ցանկալի նպատակին. գերմանական

22 Aus der Presse, „Der Orient“, 1919, S. 128.

23 Տե՛ս Mitteilungen der Deutsch-Armenischen Gesellschaft, 1939, N 12, S. 11.

24 Տե՛ս Rohrbach P., Armenien. Beiträge zur Landes- und Volkskunde, Stuttgart, 1919.

25 Die Zugehörigkeit der Armenier zur arischen Rasse, „Orient im Bild“, 1933, S. 38.

լրատվամիջոցներում հայերի և հրեաների ռասայական նույնացմանը միտվող քարոզարշավը դադարեց, և 1933 թ. հուլիսի 3-ին Գերմանիայի ՆԳ նախարարի հրամանագրով հայերը «մասնագիտական ծառայության վերականգնման օրենքին» համապատասխան դասվեցին արիական ժողովուրդների շարքում՝ այդպիսով ապահովագրվելով պաշտոնավարման և այլ իրավունքների սահմանափակման օրենքներից, ինչպես և այլ պարագաներում անխուսափելի դարձող ռասայական դաժան հետապնդումներից²⁶:

Այս հաղթանակը մեկընդմիջտ ապահովագրելու և հետագայում այլևայլ նենգափոխումների ու կեղծումների հնարավորությունը բացառելու նպատակով 1934 թ. սկզբին «Գերմանա-հայկական ընկերության» կողմից լույս ընծայվեց նաև «**Armeniertum und Ariertum**» («**Հայկականությունը և արիականությունը**») կոլեկտիվ աշխատությունը՝ գիտական և փաստագրական համակողմանի հիմնավորումներով հանրությանը ներկայացնելով հայ ժողովրդի արիական պատկանելությունը փաստող 10 ծավալուն հոդվածներ՝ հեղինակված **պրոֆ. Շայդերի, Է. Շփրի, Յ. ֆոն Լերսի, Կ. Ռոթի, Պ. Ռոհրբախի, Յ. Սարժիզովսկու, Սաքսոնիայի դուքս ֆոն Մաքսի, Ա. Աբեդյանի, Ռ. Շեֆերի և Գ. Կլինգեի** կողմից: Այստեղ, անշուշտ, անհնար է մանրամասն անդրադառնալ աշխատության մեջ ներառված բոլոր հրապարակումներին: Նշենք միայն, որ Ռոհրբախը, որի հոդվածը կրում էր «Ավելորդ հարց» վերնագիրը, արիական ռասային հայերի պատկանելությունը համարելով անվիճելի՝ դա կասկածի ենթարկող տեսակետները անվանում էր անհեթեթ և «ավելորդ»: «Եթե հայերը չպետք է արիներ լինեն,- հայտարարում էր նա իր հոդվածում,- ապա միայն որպես օրինակ նշելու համար անհրաժեշտ է ասել, որ չպետք է լինեն նաև իտալացիները»²⁷: Ի հիմնավորումն իր տեսակետի՝ նա ներկայացնում էր հայ բանաստեղծության առանձին նմուշներ՝ դրանք առադրելով գերմանացի և պարսիկ բանաստեղծների ստեղծագործությունների հետ և միաժամանակ կատարում էր ուշագրավ քննական դիտողություններ, որոնց անառարկելիությունը կասկածի ենթակա լինել չէր կարող: Այս աշխատությունը, որի գիտական ու պատմամշակութային արժանիքներն այսօր էլ չեն կորցրել իրենց արդիականությունը, Գերմանիայում նացիոնալ-սոցիալիստների իշխանության տարիներին հայության համար ունեցավ անգնահատելի քաղաքական նշանակություն:

Ինչևէ, դր. Պաուլ Ռոհրբախը մինչև իր մահը²⁸ մնաց և գործեց իբրև «Գերմանա-հայկական ընկերության» նախագահը՝ մեծ ներդրում ունենալով ինչպես այդ ընկերության աշխատանքներում, այնպես էլ այլ կազմակերպությունների և անհատների հայանպաստ նախաձեռնություններում: Բնականաբար, նա սերտ կապի մեջ էր Գերմանիայում գտնվող **Գարեգին Նժդեհի, Արտաշես Աբեդյանի** և մյուս հայ երևելի գործիչների հետ՝ իր հեղինակությունն ու անմնացողը աջակցությունն ի սպաս դնելով նրանց և ողջ հայությանը հուզող խնդիրների լուծմանը²⁹:

26 Տե՛ս «Armeniertum und Ariertum», Potsdam, 1934, S. 42.

27 Անդ:

28 Նա վախճանվել է 1956 թ. հուլիսի 20-ին:

29 Ռոհրբախի հետ իր ունեցած սերտ կապերի մասին վկայել է նաև Գարեգին Նժդեհը 1944 թ. նոյեմբերի 4-ի հարցաքննության ժամանակ: «1942 և 1943 թվականներին,-նշել է նա,- ես բազմիցս հանդիպումներ եմ ունեցել գերմանացի նշանավոր գեոպոլիտիկ Պաուլ Ռոհրբախի հետ, որը Գերմանա-հայկական ընկերության նախագահն էր»: Հարցաքննության արձանագրությունը տե՛ս 33 ազգային անվտանգության ծառայության դիվան, Կարճված գործերի ֆոնդ, N 12997, հտ. 1, թ. 93:

Ներկա հրապարակման մեջ անհնար է անդրադառնալ Ռոհրբախի՝ Հայաստանին վերաբերող բոլոր ուսումնասիրություններին: Այդ բեղմնավոր գիտնականի ու քաղաքական մեկնաբանի կյանքի, գործունեության և հրապարակախոսական ժառանգության հանգամանակից ուսումնասիրությունը թերևս պետք է դառնա առանձին մենագրության նյութ, որի անհրաժեշտությունը ներկայումս, ավելի քան երբևէ, հրատապ է: Նման համալիր ուսումնասիրությունը կօգնի վերացնել պատմագիտության մեջ առայսօր տեղ գտած բացերը և համապատասխանաբար նաև սրբագրել կամ կանխել ինչպես ականա ի հայտ եկող թյուրմբռնումները, այնպես էլ անտեղյակության փաստի տակ քողարկվող զանազան նենգավոխումները: Դրանց ամենաարտառոց դրսևորումներից մեկն առկա է, օրինակ, Գերմանիայում վերջին տարիներին լույս տեսած «**Deutsche Biographische Enzyklopädie**» անվանումը կրող հանրագիտարանում: Այնտեղ թվարկված՝ Ռոհրբախի աշխատությունների անվանումներում «Հայաստան» բառը որպես կանոն փոխարինվել է «Թուրքիայով», ուստի հանրագիտարանի ընթերցողն ի վիճակի չէ դույզն-ինչ պատկերացում ունենալ անգամ Ռոհրբախի աշխատությունների վերնագրերի մասին³⁰:

Ինչ վերաբերում է հայ իրականությանը, ապա մեզանում ևս Ռոհրբախի հայանպաստ գործունեությունը և գրական-հրապարակախոսական ժառանգությունը դեռևս մնում են չուսումնասիրված վիճակում: Փոխարենը՝ ժամանակին շրջանառության մեջ են դրվել տեղեկություններ հայ ժողովրդի տեղահանման և բնաջնջման հարցում Ռոհրբախի իբրև թե ունեցած որոշակի դերակատարման վերաբերյալ, որոնք որևէ կերպ չեն հիմնավորվել: Այս երևույթն իր դրսևորումն է գտել խորհրդային շրջանում լույս տեսած պատմագիտական մի շարք աշխատություններում, մասնավորապես Լեոյի «Անցյալից» գրքում: Այստեղ Ռոհրբախի մասին արտահայտվել է հետևյալ նկատառումը. «1895-1896-ին մի պաստոր Հեյման էր, որ իր Քրիստոսի անունով հավատացնում էր, թե արժեր, որ թուրքերը կոտորեին հայերին, իսկ այժմ՝ 1913-ին, մի «հայասեր» էր (օ՛, հայասեր) Պատու Ռոհրբախ, որ առաջին անգամ սրիկա-հայասիրական խորհուրդ էր տալիս թուրքերին, որ հայերին, Ռուսաստանի ազդեցությունից ազատելու համար, պետք է հեռացնել ռուսական Հայաստանի հարևանությունից և, հանելով իրանց երկրից, բնակեցնել Բաղդադի երկաթուղու երկարությամբ գետին մշակելու և գերմանական փողատերերի համար նույնիսկ ստրուկներ դառնալու համար, ինչպիսին էին նեգրները Գերմանիայի աֆրիկյան գաղութներում»³¹:

Այս խիստ պարտավորեցնող գնահատականը, որի համար Լեոն որևէ սկզբնաղբյուր չի հիշատակում, և որը հետագայում շատերի կողմից անքննադատ կերպով ընդօրինակվել է³², ակնհայտորեն պայմանավորված է եղել առանձին հայերի և թուրքերի մոտ Ռոհրբախի վերաբերյալ ժամանակին ի հայտ եկած կարծիքներով ու ենթադրություններով: Այս առիթով, ի դեպ, արժե հիշատակել Էրզրումի գերմանական փոխհյուպատոս Մաքս Էրվին Շոյբեր-Ռիխտերի

30 Տե՛ս Deutsche Biographische Enzyklopädie, herausgegeben von Walther Killy und Rudolf Vierhaus, Bd. 8, München, 1999, S. 371.

31 Տե՛ս Լեո, Անցյալից, Թիֆլիս 1925, էջ 261-262:

32 Միևնույն կարծիքն առկա է նաև այլ ուսումնասիրողների, զորոհնակ Անդրեյ Ավետյանի՝ 1966-ին ռուսերեն լեզվով հրատարակված «Գերմանական իմպերիալիզմը Մերձավոր Արևելքում» գրքում, որտեղ մինչև իսկ այն տեսակետն է արտահայտվում, թե Ռոհրբախն ուղղակիորեն քրդերի միջոցով, հայության բնաջնջման կողմնակիցն է եղել:

կողմից դեռևս 1915 թ. օգոստոսին Գերմանիայի արտգործնախարարությանն ուղարկած տեղեկագրերից մեկը: Ավելորդ չէր լինի նշել, որ վերջինս այն գերմանացի դիվանագետներից մեկն էր, որոնք, հանգամանալից ներկայացնելով եղերական իրադարձությունների ծրագրավորվածությունն ու հրեշավոր ենթատեքստը, նաև իրենց անթաքույց անհամաձայնությունն էին արտահայտում ոճրագործությունների հանդեպ Գերմանիայի ցուցաբերած անտարբերության, իրողությունները կոծկելու՝ գերմանական մամուլի քաղաքականության հանդեպ և փորձում էին դեսպանությանն ու կառավարությանը դրդել հակազդելու դրանց: «... **Ընդամին հարկ է հիշատակել**, - նշում էր Շոյբներ-Ռիխտերը խնդրո առարկա հարցի առնչությամբ, - **որ այստեղ դիտավորյալ կերպով լուրեր են տարածվել, թե հայերի տեղահանումը կատարվում է գերմանական կառավարության պնդմամբ: Թուրքական և հայկական կրթված շրջաններում պատմում են, որ պրոֆ. Ռոհրբախը կայսեր մոտ մի գեկուցման ժամանակ նշել է, թե հայերը շատ պիտանի տարր են Միջագետքի նոսր բնակեցված, Բաղդադի երկաթուղով հատվող տարածքներում բնակեցնելու համար, և դրա հիման վրա գերմանական կառավարությունը թուրքական կառավարությանը դրդել է հայերին տեղափոխել այնտեղ: Ես, իհարկե, եռանդագին հակադրվել եմ այդ՝ ճարպիկ կերպով մոզոնված պատմությանը, բայց այնուամենայնիվ շատերի մոտ չեմ կարողացել կոտրել դրա նկատմամբ հավատը»³³:**

Ստահող լուրեր տարածելու նպատակ հետապնդողների համար Պաուլ Ռոհրբախի անվան օգտագործումն, անշուշտ, զարմանալի չի կարող լինել, քանի որ, որպեսզի դրանք հավաստի հնչեին, հարկ էր, որ տվյալ անձը ոչ միայն ազդեցիկ լիներ, այլև Արևելքի իրավիճակին քաջատեղյակ մարդու հատկանիշներ ունենար, որոնք Ռոհրբախի դեպքում լավագույնս համատեղվում էին: Իսկ այն, որ **նշված լուրերն ուղակիորեն բխում էին թուրքական կառավարության շահերից**, և վերջինս պետք է ձգտեր նպաստել նման տեսակետի արմատավորմանը, կասկածի ենթակա չի կարող լինել: Ինքնին հասկանալի է նաև, որ երիտթուրքերը Հայոց ցեղասպանության կազմակերպման և իրագործման հարցում որևէ «հուշարարի» կարիք չունեին:

Չպետք է մոռանալ նաև, որ նման թյուր տեսակետի արմատավորումը անցյալի որոշ ժամանակափուլերում համապատասխանում էր ցարական ու մանգոլանդ՝ խորհրդային քաղաքականության և քարոզչության շահերին, որոնք նպատակ ունեին հայերի շրջանում սերմանել հակազերմանական տրամադրություններ: Տարիներ շարունակ այս տեսակետը կուրորեն ընդօրինակելու արդյունքում մեզանում արմատավորվել է մի թյուրըմբռնում, որը հակասում է պատմական իրականությանը և միաժամանակ ջուր է լցնում թուրքական քարոզչության ջրաղացին, որը դեռ 1915-ից ջանում է հայերի բնաջնջման պատասխանատվությունից խուսափել՝ այն Գերմանիայի վրա բարդելու և վերջինիս իր հանցակիցը դարձնելու միջոցով:

Եթե մինչև անգամ առանց փաստերի ու հիմնավորումների կարելի է ընդունելի համարել այն տեսակետը, որ Ռոհրբախը Բաղդադի երկաթուղուն հարող տարածքը տնտեսապես զարգացնելու նպատակով կողմնակից է եղել այն

33 Տե՛ս Армянский вопрос и геноцид армян в Турции (1913-1919). Материалы политического архива Министерства иностранных дел кайзеровской Германии. Сборник под редакцией В. Микаеляна, Ереван, 1995, с. 210.

հայերով բնակեցնելու գաղափարին, միևնույն է, դա չի նշանակում, թե այդ բնակեցումը պետք է կատարվեր հայերին իրենց հայրենի բնօրրանից բռնի կերպով, զանգվածաբար տեղահանելու միջոցով, ինչը միայն ու միայն Թուրքիայի ցեղասպանական նպատակադրումն էր:

Ռ-ոհրբախի գործունեության և հրապարակախոսական ժառանգության թռուցիկ քննությունն իսկ փաստում է, որ նա նման մարդատյաց գաղափարին հետամուտ լինել չէր կարող: Ուստի գերմանացի ականավոր գիտնական, հրապարակախոս, հասարակական-քաղաքական գործիչ, ճանապարհորդ և լրագրող դր. Պաոլ Ռ-ոհրբախի հանդեպ մեզանում ձևավորված պատմագիտական թյուրըմբռնումներն անհրաժեշտ է սրբագրել, և դա որքան շուտ լինի, այնքան ավելի կշահենք թե՛ մենք և թե՛ գիտությունը:

Summary

PAUL ROHRBACH AND ARMENIA

In Light of a New Examination

Ashot. N. Hayruni

The article presents and elucidates in a detailed manner Armenia's and the Armenian people's more than half-century mutual relationship with Dr. Paul Rohrbach, a famous German scientist, publicist, social and political figure, traveler, and journalist. Along with the detailed analysis of the viewpoints put forward by Rohrbach regarding Armenia's present and future and the mission of the Armenian people with regard to the development of the East, the direction and results of his pro-Armenian activities are also closely analyzed. Simultaneously, the rooted misunderstanding of Rohrbach in Armenian historiography is examined and re-evaluated in light of a new examination. In the article, Paul Rohrbach as a prolific publicist and public figure who was preoccupied with Armenian issues is underscored as is necessity for the academic study of his literary heritage.

ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

Գ. (Թ) Պաոլ Ռ-ոհրբախի գործունեության և հրապարակախոսական ժառանգության թռուցիկ քննությունն իսկ փաստում է, որ նա նման մարդատյաց գաղափարին հետամուտ լինել չէր կարող: Ուստի գերմանացի ականավոր գիտնական, հրապարակախոս, հասարակական-քաղաքական գործիչ, ճանապարհորդ և լրագրող դր. Պաոլ Ռ-ոհրբախի հանդեպ մեզանում ձևավորված պատմագիտական թյուրըմբռնումներն անհրաժեշտ է սրբագրել, և դա որքան շուտ լինի, այնքան ավելի կշահենք թե՛ մենք և թե՛ գիտությունը:

ՎԷՄ համահայկական հանդես